ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կրտսեր գիտաշխատող
ՀՀ ԳԱԱ ՊԻ Միջին դարերի պատմության բաժին
henry.khachatryan89@gmail.com

«ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ 387–640 ԹԹ.

Բանալի բառեր՝ *Պրոկոպիոս Կեսարացի, Զենոն, Բյուզանդական Հայաստան, Ներքին Հայք, Հուստինիանոս I, կոմես, նախարար:*

Մեծ Հայքի թագավորության 387 թ. բաժանմամբ երկրի արևմտյան նահանգները՝ Բարձր Հայքը, Ծոփքը և Աղձնիքի Անգեղտուն ու Նփրկերտ գավառները հայտնվեցին Հռոմեական (Բյուզանդական) կայսրության տիրապետության ներքո: Բարձր Հայքում և հարակից տարածքներում մինչև 387 թ. վերջը կամ 388 թ. սկիզբը շարունակեց գոյատևել Արևմտահայկական թագավորությունը: Արշակ Գ արքայի (380–387/88) մահից հետո, հռոմեացիները Մեծ Հայքի իրենց բաժնում այլևս թագավոր չնշանակեցին: Ըստ Մովսես Խորենացու, նախարարներին առաջնորդում էր Գազավոն Կամսարականը, իսկ երկիրը կառավարվում էր հռոմեացիների նշանակած կոմսերի միջոցով[1]: Պրոկոպիոս Կեսարացին իր հերթին հաղորդում է, որ այդ բաժանումից հետո հռոմեական կայսրը Հայոց իշխան էր կարգում ում և երբ կամենում էր, և նրան կոչում էին Հայաստանի կոմես[2]: Կարճ ժամանակով նախկին Արևմտահայկական թագավորության տարածքը վերամիավորվեց նախ՝ Խոսրով Վերջին (384–388 և 414–415), ապա՝ Վռամշապուհ (388–414) արքաների կողմից[3]: Այնուհետև, 408 թ. Թեոդոսիոս II Փոքր (408–450) կայսրն այդ տարածքներն այլևս չվստահեց հայոց Վռամշապուհ արքային, այլ գործակալներով հանդերձ իրեն պահեց[4]:

---

[1] **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Ե., 1991 (այսուհետև՝ **Մովսէս Խորենացի**), էջ 316:

[2] Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 5, Բյուզանդական աղբյուրներ Ա, **Պրոկոպիոս Կեսարացի**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Ե., 1967 (այսուհետև՝ **Պրոկոպիոս Կեսարացի**), էջ 190:

[3] Տե՛ս **Մովսէս Խորենացի**, էջ 319–320, 324:

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 328:

Եթե հաշվի առնենք նաև Փոքր Հայքի տարածքը, որն ավելի վաղ էր անցել բյուզանդական (հռոմեական) տիրապետության տակ, ապա «Բյուզանդական Հայաստանը» լայն առումով կբաժանվի երեք մասի՝ Փոքր Հայքի, Մեծ կամ Ներքին Հայքի[5] և Մյուս Հայքի կամ սատրապությունների:

Այստեղի վարչական կառուցվածքը լավ պատկերացնելու համար հարկ է անդրադառնալ Բյուզանդական կայսրության վարչական բաժանմանը: IV դ. Հռոմեական կայսրությունը բաժանված էր չորս խոշոր երկրամասերի՝ պրեֆեկտուրաների: 395 թ. կայսրության՝ երկու մասի տրոհվելուց հետո, Արևելահռոմեական կայսրությունը՝ Բյուզանդիան, ընդգրկում էր երկու պրեֆեկտուրա՝ Իլլիրիան և Արևելքը, որոնք իրենց հերթին բաժանվում էին դիոցեզների, իսկ դրանք՝ պրովինցիաների կամ նահանգների[6]: Արևելք պրեֆեկտուրան բաղկացած էր հինգ՝ Թրակիա, Ասիա, Պոնտոս, Արևելք և Եգիպտոս դիոցեզներից: Պրեֆեկտուրայի քաղաքացիական իշխանությունը գտնվում էր պրետորիական պրեֆեկտի, իսկ ռազմականը՝ զինվորական մագիստրոսի ձեռքում[7]: Դիոցեզը ղեկավարում էր պրեֆեկտի տեղակալը՝ վիկարիոսը, իսկ պրովինցիան՝ պրեզիդը[8]:

Թեոդոսիոս I Մեծ (379–395) կայսեր օրոք, հավանաբար 379–386 թթ. միջակայքում Փոքր Հայքը բաժանվեց երկու առանձին պրովինցիաների. Առաջին Հայքի՝ Սեբաստիա կենտրոնով և Երկրորդ Հայքի՝ Մելիտենե կենտրոնով[9]: Վարչական առումով այս պրովինցիաներն ընդգրկված էին Պոնտոսի դիոցեզում, որն իր հերթին Արևելք պրեֆեկտուրայի մասն էր կազմում:

Առաջին և Երկրորդ Հայքերի քաղաքացիական իշխանության գլուխ կանգնած էին պրեզիդները[10]՝ պրովինցիայի կառավարիչները, որոնք ենթարկվում էին պրեֆեկտի տեղակալին, իսկ զինվորական իշխանության ներ-

---

[5] Արևմտահայկական թագավորության տարածքը Պրոկոպիոս Կեսարացին անվանում է Մեծ Հայք, իսկ Հուստինիանոս I կայսեր՝ հայազգի Սիտտասին ուղղված հրովարտակում նշվում է, որ Մեծ Հայքը կոչվել է նաև Ներքին Հայք:

[6] Տե՛ս **Evans J.**, The Emperor Justinian and the Byzantine Empire, London, Greenwood Press, 2005, p. 5:

[7] Տե՛ս **Gregory T.**, A History of Byzantium, Blackwell Publishing, 2005, էջ 38–39:

[8] **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Ե., 1987, էջ 109:

[9] Տե՛ս **Գիտերբոգ Կ.**, Հռովմէական Հայաստան եւ հռովմէական սատրապութիւնները Դ–Զ դարերուն, գերմաներէնէ թարգմանեց՝ Հ. Մկրտիչ Վ. Նորշուան, Վիեննա, 1914, էջ 34–35:

[10] Տե՛ս Notitia dignitatum accedunt notitia urbis Constantinopolitanae et laterculi prouinciarum, edidit Otto Seeck, Berolini, 1876, OR. I, 79, 109, 110:

կայացուցիչը Հայաստանի դուքսն էր, որին ենթակա էին Առաջին ու Երկրորդ Հայքերը և Պողեմոնական Պոնտոսը[11]:

387/388 թ. ստեղծված Մեծ կամ Ներքին Հայքն[12] ընդգրկում էր Բարձր Հայքի՝ Աղյուն, Դարանաղի, Մուզուր, Եկեղյաց, Մանանաղի, Դերջան, Շաղագոմ, Սպեր, Կարին, և Ծոփք նահանգի՝ Պաղնատուն և Խորձյան գավառները[13]: Ինչպես նշվեց, Ներքին Հայքը կառավարում էր կոմեսը, որը կոչվում էր «Հայոց իշխան» և նշանակվում կայսեր կողմից[14]: Նրա աթոռանիստը Կարին-Թեոդոսուպոլիս քաղաքն էր: Հենց այս շրջանում է ծնունդ առնում «Հայոց իշխան» տիտղոսը[15]: Թեև երկիրը կայսրության գերիշխանության տակ էր, սակայն այստեղ հռոմեական օրենքները և սովորույթները չէին գործում, և ներքին իշխանությունը պատկանում էր հայ նախարարներին[16]: Հայաստանի կոմեսն իր տրամադրության տակ չուներ զինվորական ուժեր[17], ինչը նշանակում է, որ նա քաղաքացիական իշխանության ներկայացուցիչ էր, և երկրամասի պաշտպանությունն իրականացնում էին հայ նախարարները[18]: Մինչդեռ Ե-

---

[11] Տե՛ս նույն տեղում, OR. I, 49, XXXVIII:

[12] Ըստ այլ տեսակետի՝ Ներքին Հայքը կազմավորվել է 389 թ.: Տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: (Փորձ՝ VII դարի հայկական քարտեզի վերակազմության ժամանակակից քարտեզագրական հիմքի վրա), Ե., 1963, էջ 24:

[13] Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, Ա մաս, Ե., 2004, էջ 46: Տե՛ս նաև Հայաստանի ազգային ատլաս, հ. Բ, Ե., 2008, էջ 32: Իր ուսումնասիրության մեջ Ա. Վակկան, թեև նշում է, որ Ներքին Հայքը՝ Բարձր Հայքի հոմանիշն էր մինչ հուստինիանոսյան բարեկարգումները, այդուհանդերձ նա Ներքին Հայքը (Interior Armenia) տեղորոշում է Վանա լճից հյուսիս՝ Մանազկերտի շրջակայքում: Տե՛ս **Vacca A.**, Non-Muslim Provinces under Early Islam: Islamic Rule and Iranian Legitimacy in Armenia and Caucasian Albania, Cambridge University Press, 2017, p. 47:

[14] **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 190:

[15] **Տեր-Ղևոնդյան Ա.**, Հայոց իշխան տիտղոսի ծագումը և Հայոց տերությունը VII դարում («Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 1, էջ 241):

[16] Տե՛ս **Գիտերբոգ Կ.**, նշվ. աշխ., էջ 38–39:

[17] **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 190:

[18] Տե՛ս նույն տեղում, էջ 191: 450 թ. դեպքերի առնչությամբ Եղիշեն հաղորդում է, որ Ստորին Հայքի սպարապետը Վասակ Մամիկոնյանն էր (**Եղիշէ**, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 627–628): Ս. Երեմյանի կարծիքով Առաջին Հայքը՝ Սեբաստիա կենտրոնով կոչվում էր «Վերին Հայք», իսկ Երկրորդ Հայքը Մելիտենե կենտրոնով՝ «Ստորին Հայք»: Այստեղից նա եզրակացրել է, որ Եղիշեի հիշատակած Վասակ Մամիկոնյանը Մելիտենեում գտնվող Հայաստանի դուքսն էր: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Ե., 1984, էջ 119–120:

գիպտոսի կոմեսն օժտված էր ռազմական, իսկ Իսավրայի կոմեսը՝ և՛ ռազմական և՛ քաղաքացիական իշխանությամբ[19]:

Հայաստանի կոմեսի իշխանությունն իր դիրքով նույնանում էր Արևելքի կոմեսի իշխանությանը, ով համարվում էր պրեֆեկտի տեղակալը, և որի իրավասությունների մեջ էր մտնում նահանգների կառավարիչների՝ պրեզիդների գործունեության հսկումը, հարկերի հավաքումը և դատական իշխանության իրավունքը[20]: Կոմեսի պաշտոնը, համազոր էր Արևելյան Հայաստանի մարզպանի իշխանությանը[21]: Մեծ կամ Ներքին Հայքը, փաստորեն, սատրապություններից տարբերվում էր նրանով, որ ղեկավարվում էր պետական իշխանության ներկայացուցչի կողմից, ինչի հետևանքով 484–488 թթ. ապստամբության ճնշումից հետո այն զերծ մնաց որևէ վերափոխությունից: Կոմեսի պաշտոնը վերացվեց 528/529 թ. Հուստինիանոս I (527–565) կայսեր հատուկ հրովարտակով, սակայն Մեծ կամ Ներքին Հայքը որպես վարչական միավոր պահպանվեց:

Մյուս Հայքը կամ այն սատրապությունները, որոնք բյուզանդական սկզբնաղբյուրներում կոչվում էին նաև ազգություններ կամ ցեղեր, հայկական ինքնավար իշխանություններ (նախարարություններ) էին[22]: Ըստ Պրոկոպիոս Կեսարացու, դրանք հինգն էին, որոնցից հանվանե հիշատակվում են Բալաբիտենեի (Բալահովիտ) ու Սոֆանենեի (Մեծ Ծոփք) սատրապները[23]: Հինգ սատրապությունների գոյության փաստն առաջին հայացքից կարծես թե հաստատում է նաև Հուստինիանոս I կայսեր կողմից 536 թ. հրապարակած՝ «Հայաստանի չորս արխոնտների նշանակման մասին» 31-րդ նովելը: Սակայն հայազգի Սիտտասին ուղղված նրա «Բյուզանդական Հայաստանի ռազմական վերակառուցման մասին» հրովարտակում հիշատակվում են վեց սատրապա-

---

[19] **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 137:

[20] Տե՛ս նույն տեղում, էջ 137–138:

[21] **Սամուելյան Խ.**, Հին հայ իրավունքի պատմությունը, հ. I, Ե., 1939, էջ 115–116:

[22] Հարկ է նշել, որ սատրապությունների առաջացումը միաժամանակ տեղի չունեցավ: 387 թ. բաժանումից հետո հիշատակվում է Մեծ Ծոփքի սատրապ Գադդանը, ուստի կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ Անգեղտունն ու Անձիտը ևս վերածվեցին սատրապության: Փոքր կամ Շահունյաց Ծոփքը, Բալահովիտի ու Հաշտյանքի հետ դեռևս Արևմտահայկական թագավորության մասն էին: Միայն 408 թ. հետո, երբ բյուզանդական արքունիքն Արշակ Գ-ի տիրույթներն այլևս չվստահեց Հայոց արքային, կայսրությունը վերոհիշյալ երեք գավառները ևս վերածեց սատրապության: Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, մաս Ա, (Արևմտյան և հարավային աշխարհներ), Ե., 2001, էջ 142–143:

[23] Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 190–192:

կան իշխանություններ. «Անզետենա (Անձիտ), Ինգիլենա (Անգեղտուն), Ասթիանենա (Հաշտյանք), Սոֆենա (Փոքր կամ Շահունյաց Ծոփք), Սոֆանենա (Մեծ Ծոփք) և Բալաբիտենա (Բալահովիտ)»[24]: Իսկ արդեն 31-րդ նովելում կայսրը նշում է, որ նոր կազմավորված Չորրորդ Հայքը նախկինում պրովինցիայի կարգավիճակ չուներ, այլ բնակեցված էր ազգություններով, որոնք կրում էին Ցոֆանենե, Անզիտենե, Ցոֆանե, Ասթիանենե, Բալաբիտենե անունները և գտնվում էին սատրապների իշխանության ներքո[25]: Ինչպես տեսնում ենք, չի հիշատակվում Անգեղտուն (Ինգիլենա) սատրապական իշխանությունը:

Ն. Ադոնցի կարծիքով Պրոկոպիոս Կեսարացին հայկական հինգ սատրապությունները շփոթել է «անդրտիգրիսյան հինգ երկրների հետ»[26]: Սակայն այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչո՞ւ է նույն կայսեր տարբեր հրովարտակներում առկա տարբերություն: Կ. Գյուտերբոգը գտնում է, որ Անգեղտան (Ինգիլենայի) հիշատակության բացակայությունը կարող էր պայմանավորված լինել նրա՝ Մեծ Ծոփքի կազմում գտնվելու հանգամանքով[27]: Խ. Սամվելյանի ու Ա. Սուքիասյանի կարծիքով սատրապությունների թիվը հինգն էր: Նրանք նաև նշում են միայն մեկ՝ Ծոփքի գոյության մասին[28], թեև սկզբնաղբյուրում, ինչպես փաստվեց, բացակայում էր Անգեղտան (Ինգիլենայի) իշխանության մասին հիշատակումը:

Հուստինիանոս I կայսեր «Բյուզանդական Հայաստանի ռազմական վերակառուցման մասին» հրովարտակում թվարկված սատրապությունների պատմաաշխարհագրական քննությունը վկայում է ավելի շուտ վեց հայկական իշխանությունների առկայության մասին, որովհետև Մյուս Հայքը, որը տարածվում էր Արևմուտքում՝ Եփրատից մինչև Ամիդ քաղաք, ինքըստինքյան ներառելու էր նաև բաց թողնված Անգեղտան (Ինգիլենայի) իշխանությունը[29]: Վեց սատրապությունների հիշատակումը, ինչպես նշվեց, կապված էր «Բյուզանդական Հայաստանի» ռազմական վերակառուցման հետ, որը տեղի էր

---

[24] Տե՛ս Corpus Iuris Civilis, vol. secundum, Codex Iustinianus, recognovit Paulus Krueger, Berolini, 1892, Liber Primus, XXVIIII. 5, p. 82:

[25] Տե՛ս Corpus Iuris Civilis, vol. tertium, Novellae, recognovit Rudolfus Schoell, Berolini, 1895, Nov. XXXI, p. 237:

[26] **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 55:

[27] **Գիւտերբոգ Կ.**, նշվ. աշխ., էջ 45:

[28] **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 115, **Сукиасян А**. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма (III–IX вв.), Е., 1963, с. 320:

[29] Տե՛ս Հայաստանի պատմության ատլաս, էջ 46:

ունեցել 528/529 թ., ինչի հետևանքով այն վերածվել էր ռազմական շրջանի: Հուստինիանոս I կայսրը 536 թ. հրապարակել էր չորս Հայքերի ստեղծման մասին նովելը, որում արդեն հիշատակվում էր հինգ սատրապություն: Հավանաբար, ռազմական բարեփոխումից հետո նա Անգեղտունը (Ինգիլենան) կցել էր Մեծ Ծոփքի սատրապությանը՝[30] նպատակ ունենալով թուլացնել այն: Ահա, հենց այս վիճակն է արձանագրել Պրոկոպիոս Կեսարացին, նշելով հինգ սատրապության գոյությունը:

Սատրապության գլուխ կանգնած էր տեղական նախարար-իշխանը, որի իշխանությունը, ժառանգական էր և ցմահ[31]: Սատրապները կայսրից ստանում էին միայն տարբերանշաններ՝ ծիրանի, պատմուճան և մինչև ծունկը հասնող կարմիր կոշիկներ, որոնք հագնում էին Հռոմի կայսրերն ու պարսից արքաները[32]: Այս վեց իշխանությունները կամ սատրապությունները համարվում էին կայսրության հետ դաշնակցային հարաբերությունների մեջ գտնվող միավորներ և իրենց ազատությունից օգտվում իրավունքի հիման վրա[33]: Այսինքն, սատրապներն իրենց հողատիրույթների լիիրավ տիրակալներն էին: Ազատված լինելով հարկատվությունից և չունենալով օտար կառավարիչ ու հռոմեական կայազոր՝ նրանք հիմնականում պարտավոր էին կայսրությանը զինվորական ծառայություն մատուցել[34]: Պրոկոպիոս Կեսարացին հայտնում է, որ հռոմեական բանակը չի օգնել ո՛չ Հայոց արքային, ո՛չ էլ սատրապներին, որոնք պատերազմական գործերում ինքնուրույն էին[35]: Ինչպես տեսնում ենք, կայսրությանն անցած հատվածում նախարարական իրավունքը շարունակում էր գոյատևել:

Բյուզանդական կայսրության այս հանդուրժող քաղաքականությունը երկար չի տևում: Զենոն կայսեր (474–491) դեմ 484–488 թթ.[36] Անտիոքի ստրա-

---

[30] Հմմտ. **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 24: Տե՛ս նաև Ս. Երեմյանի «Հայ ժողովրդի պայքարը օտար տիրողների դեմ 385–536 թթ.» քարտեզը՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. II ներդիրում, ***նույնի՝*** «Հայաստանը Հուստինիանոս Ա-ի վարչական բաժանումներից հետո (536–591 թթ.)» քարտեզը: Տե՛ս նաև **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 143, 217:

[31] **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 190:

[32] Տե՛ս նույն տեղում, էջ 191:

[33] **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 122:

[34] Նույն տեղում: Սատրապները վճարում էին միայն «թագի ոսկի» կոչված հարկատեսակը, որը կամավոր նվիրատվության բնույթ ուներ (**Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 132):

[35] **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 191:

[36] **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Դ, Ե., 1981, էջ 421, **Գիւտերբոգ Կ.**, նշվ. աշխ., էջ 59–61, **Իսկանյան Վ.**, Հայ-բյուզանդական հարաբերությունները IV–VII դդ., Ե., 1991, էջ 113, 121:

տելատ Իլլոսի և իրեն կայսր հռչակած Լեոնտիոսի գլխավորությամբ ապստամբություն է տեղի ունենում[37], որին միացել էին նաև հայ սատրապները: Զենոնն ապստամբությունը ճնշելով նրանց զրկում է ժառանգական իշխանությունից[38]: Սատրապներն այդուհետև նշանակվելու էին կայսեր կողմից: Բացառություն կազմեց միայն Բալահովտի սատրապությունը, քանզի վերջինս, ռազմական տեսակետից շատ թույլ լինելով ապստամբությանը, չէր մասնակցել[39]: Ինչպես տեսնում ենք, բոլոր սատրապները կառավարել են ժառանգաբար և այդ իրավունքից զրկվել միայն Զենոն կայսեր հրամանով:

Այստեղ ուշագրավն այն է, որ կայսեր կողմից վերացվում էին ոչ թե նախարարների հողատիրական ժառանգատիրական[40], այլ սատրապի պաշտոնը ժառանգաբար վարելու իրավունքները: Եթե կայսրը նպատակ ունենար վերացնելու նախարարների տոհմական ժառանգական իրավունքները, ապա նա Բալահովտի սատրապության կարգավիճակը չէր թողնի անփոփոխ, որքան էլ այն թույլ և աննշան լիներ: Այդուհանդերձ, կայսեր այս միջոցառումը նպատակ ուներ հայկական ինքնավար իշխանություններն աստիճանաբար վերածել կայսրության սովորական պրովինցիայի: Այժմ սատրապը կայսրության կողմից նշանակվող պաշտոնյա էր, որը կարող էր և կապ չունենալ տեղի իշխանական տոհմերի հետ:

Ինչպես Մարզպանական Հայաստանի նախարարները, այստեղի սատրապ-նախարարները ևս իրենց հողատիրույթների փաստացի տիրակալներն էին: Նրանց ժառանգներն էին իրենց ավագ որդիները, որոնք նախկինում ինքնաբերաբար դառնում էին ամբողջ սատրապության ղեկավարը: Պահպանելով իրենց նախարարական իրավունքները, նրանք այժմ պետք է նշանակվեին կայսեր կողմից, որպեսզի իշխանություն ստանային ամբողջ սատրապության վրա, ինչն առիթ դարձավ, որպեսզի կայսրությունը միջամտի սատրապությունների ներքին կյանքին: Հակառակ դեպքում անհիմն կլիներ Պրո-

---

[37] Տե՛ս The *Chronicle* of *Theophanes Confessor*, Byzantine and Near Eastern History. AD 284–813, translated with Introduction and Commentary by Cyril Mango and Roger Scott with the assistance of Geoffrey Greatrex, Oxford, 1997, p. 199–204, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 8, Ասորական աղբյուրներ Ա, Կեղծ Յոշվա Ստիլիտի (Սյունակյաց) ժամանակագրությունը, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հ. Մելքոնյանի, Ե., 1976, էջ 158–161:

[38] Ն. Ադոնցը սատրապների ժառանգական իրավունքների վերացումը թվագրում է 485 թ.: Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 134–135:

[39] Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 191:

[40] Տե՛ս **Սամուելյան Խ.**, նշվ. աշխ., էջ 116:

կոպիոս Կեսարացու՝ ապստամբության նկարագրությանը հաջորդող այն միտքը, թե հայ նախարարների իշխանության ներքո գտնվող զորքը, ինչպես նախկինում, կազմված էր ոչ թե հռոմեացիներից, այլ փոքրաքանակ հայերից[41]:

Բացի այդ, եթե նրանք զրկված լինեին իրենց ժառանգական իրավունքներից, ապա Հուստինիանոս Ի-ի 535 թ. հրապարակած նախ՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտը, այնուհետև՝ 536 թ. նովելը, որով տոհմային կալվածքներից ժառանգություն պետք է ստանային նաև կանայք, ևս անիմաստ կլինեին: Փաստորեն ժառանգական օրենքը գործել է, և դրա դեմ են ուղղված եղել կայսեր հրամանագրերը: Այսինքն, սատրապությունները, որպես իշխանություններ պահպանվել են, և միայն սատրապներն են զրկվել իրենց պաշտոնին ժառանգաբար տիրելու իրավունքից: Հավանաբար, դրանից հետո սատրապությունները դարձել են նաև հարկատու[42]: Ցավոք, տեղեկություններ չկան այն մասին, թե նշանակվող սատրապները ցմա՞հ են կառավարել, թե ոչ: Այս կարգավիճակով Մեծ կամ Ներքին Հայքն ու սատրապությունները մնացին մինչև Հուստինիանոս Ի կայսեր գահակալումը:

«Բյուզանդական Հայաստանի» վարչաիրավական կարգավիճակում էական փոփոխություններ մտցրեց Հուստինիանոս Ի կայսրը: Դեռևս 527 թ. աշնանը նա սկիզբ դրեց բյուզանդական Արևելքի ռազմական վերակառուցմանը, որի էությունը քաղաքացիական և ռազմական իշխանությունների միացումն էր: Այդ միջոցառումները տարածվեցին նաև հայկական շրջանների վրա: 528/529 թ. հրովարտակով[43] ստեղծվեց ռազմական մի նոր նահանգ, որում ընդգրկվեցին Մեծ կամ Ներքին Հայքը, Պողեմոնական Պոնտոսը, Առաջին և Երկրորդ Հայքերը, ինչպես նաև հայկական սատրապությունները[44]:

Պրոկոպիոս Կեսարացու հաղորդմամբ՝ Հուստինիանոս կայսրը վերացնելով Մեծ Հայքի իշխանությունը, այնտեղ զորավար նշանակեց և նրան բավարար քանակությամբ զորք տվեց[45]: Պատմիչը նաև հայտնում է, որ Հուստի-

[41] Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 191:

[42] Տե՛ս նույն տեղում, էջ 192:

[43] Հուստինիանոսի ռազմական վերակառուցման մասին տե՛ս **Իսկանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 148–169:

[44] Տե՛ս Corpus Iuris Civilis, Codex Iustinianus, p. 82:

[45] Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 190:

նիանոսը վերացրեց սատրապների իշխանությունը՝ նշանակելով երկու դուքսերի[46]:

Յ. Մալալան նույնպես հաղորդում է ռազմական այս վերափոխության մասին և օգտվելով Հուստինիանոսի հրովարտակից փաստում, որ Ցիտտան (Զետա, Սիտտաս) կայսեր կողմից Արևելքի և մայրաքաղաքի զորքերից լեգեոններ ստացավ[47]: Նա ևս նշում է, որ այդ վերափոխության արդյունքում մինչ այդ գոյություն ունեցող բոլոր իշխանությունները վերացվեցին[48]: Սակայն կայսերական հրովարտակում նշվում է, որ վերանում էին ոչ թե Մեծ կամ Ներքին Հայքի և սատրապական իշխանությունները, այլ՝ կոմեսի պաշտոնը: Առաջին և Երկրորդ Հայքերի դուքսերի իշխանությունը ևս պահպանվում էր:

Վարչական այս միավորի ստեղծման հետևանքով վերացվում էր կոմեսի պաշտոնն ու սատրապների ռազմական ինքնուրույնությունը, իսկ հայկական հողերը միավորվում էին ստրատեգոսի կամ զինվորական մագիստրոսի՝ Սիտտասի իշխանության ներքո[49]: Հուստինիանոս I կայսրը ռազմական իշխանությունը հանձնեց նորանշանակ երեք դուքսերին, որոնցից երկուսի նստավայրերն էին Մարտիրուպոլիսն ու Կիթառիճը (Կիթարիզոն)՝ սատրապական Հայքում, իսկ երրորդինը, Արտալեսը՝ Ներքին Հայքում[50]:

Ռազմական վերակառուցմանը հաջորդեցին կայսրության սահմաններում բնակվող հայերի հողատիրական ժառանգական իրավունքների վերացմանն ուղղված հրամանագրերը:

Այսպես, 535 թ. հրապարակվեց Հուստինիանոսի՝ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» էդիկտը, որով նախարարական տիրույթներից, որոնք մինչ այդ երեց որդիներն էին ժառանգում, այսուհետև փաստորեն ժառանգման իրավունք էին ստանում նաև տոհմի կանայք[51]: Հայոց ժառանգական իրավունքն ուներ սոցիալ-քաղաքական խոր արմատներ: Միայն արու զավակներին ժառանգման իրավունք վերապահելու գլխավոր նպատակը տոհմական ունեցվածքի մասնատումը բացառելն էր: Կայսեր թիրախը ոչ թե մանր, այլ խոշոր կալվածքներն էին, որոնք պատկանում էին հայ նախարար-

---

[46] Տե՛ս նույն տեղում, էջ 191:

[47] Տե՛ս **Iohannis Malalae** Chronographia, ex recensione Ludovici Dindorfii, Bonnae, 1831, p. 429:

[48] Տե՛ս նույն տեղում, էջ 430:

[49] Տե՛ս **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 155:

[50] Տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, էջ 191, 194:

[51] Տե՛ս Corpus Iuris Civilis, Novellae, Edictum III, pp. 760–761:

ներին և նրանց հզորության գրավականն էին: Սրա նպատակը նախարարների՝ հողատիրության վրա հենված հզորությունը վերացնելով, նրանց ձուլելն ու այնտեղ կայսերական կառավարում հաստատելն էր:

Այնուհետև, կյանքի կոչվեցին Հուստինիանոս կայսեր վարչական վերափոխությունները՝ 536 թ. նրա հրապարակած 31-րդ «Հայաստանի չորս արխոնտների նշանակման մասին» նովելով: Ըստ դրա՝ Հայաստանի բյուզանդապատկան տարածաշրջանների հողերը բաժանվում էին չորս պրովինցիայի.

1. **Առաջին կամ Ներքին Հայք**, Թեոդոսուպոլիս կենտրոնով, որը ներառում էր Ներքին Հայքը, Պողեմենական Պոնտոսի և նախահուստինիանոսյան Առաջին Հայքի տիրույթների մի մասը:

2. **Երկրորդ Հայք**, որի տարածքը մեծ մասամբ համապատասխանում էր նախկին Առաջին Հայքին՝ Սեբաստիա կենտրոնով:

3. **Երրորդ Հայք**, որը նախկինում Երկրորդ Հայք էր կոչվում, Մելիտենե կենտրոնով:

4. **Չորրորդ Հայք**, որը կազմավորվեց նախկին սատրապական իշխանություններից, Մարտիրուպոլիս կենտրոնով[52]:

Ըստ որում, Առաջին և Երրորդ Հայքերը դասվում էին «սպեկտաբիլային», իսկ Երկրորդ և Չորրորդ Հայքերը՝ «օրդինար» աստիճան ունեցող պրովինցիաների շարքերին[53]: Առաջին Հայքի կառավարիչը կրում էր փոխհյուպատոսի (պրոկոնսուլի) բարձր տիտղոսը, Երկրորդ Հայքինը՝ պրեզիդի, Երրորդ Հայքինը՝ «հուստինիանոսյան կոմեսի», իսկ Չորրորդ Հայքինը՝ հավանաբար հյուպատոսի (կոնսուլի)[54]:

Երրորդ Հայքի՝ ռազմաքաղաքական լայն իշխանությամբ օժտված կոմես կարգված Թովմայի գլխավոր պարտականությունը, թերևս, սահմանված ամենամյա հարկերի հավաքումն էր[55]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հուստինիանոս կայսեր հիմնական նպատակներից էր նաև հայ բնակչությանը հարկման ենթարկելը, մանավանդ կայսրությունը մշտապես գտնվելով պատերազմների մեջ, ֆինանսական միջոցների կարիք ուներ:

Նույն տարում՝ 536 թ., կայսրը հրապարակեց նաև 21-րդ «Հայոց ժառանգական իրավունքի մասին» նովելը՝ հասցեագրված Հայաստանի փոխհյուպա-

---

[52] Տե՛ս նույն տեղում, Nov. XXXI, էջ 235–239:

[53] Տե՛ս նույն տեղում, էջ 237:

[54] Տե՛ս **Сукиасян А.**, նշվ. աշխ., էջ 329–330:

[55] Տե՛ս Corpus Iuris Civilis, Nov. XXXI, էջ 238–239:

տոս հայազգի Ակակիոսին[56]: Քանի որ 535 թ. համանուն էդիկտին Հուստինիանոսը հետադարձ ուժ էր տվել, այսինքն այն գործում էր իր գահակալության սկզբից՝ 527 թ., նա բազում դժվարությունների առաջ կանգնեց: Այդ իսկ պատճառով հրապարակելով այդ նովելը՝ կայսրը հարցը վերանայեց, և օրենքը ուժի մեջ մտավ հրապարակման օրից, որովհետև «անցյալի վրա դրա տարածումը չէր կարգավորի հարցը, առաջ բերելով խառնաշփոթություն»[57]:

Հուստինիանոս կայսեր օրենսդրական վերափոխությունները վերջնական հարված հասցրին հայ նախարարների քաղաքացիական ու ռազմական իշխանությանը, արմատական փոփոխության ենթարկեցին Հայաստանի բյուզանդապատկան շրջանների իրավական կարգավիճակը, ինչը հանգեցրեց այնտեղ կայսերական կառավարման հաստատմանը:

Հաջորդ խոշոր վարչական փոփոխությունը տեղի ունեցավ VI դ. վերջին՝ Մորիկ (Մավրիկիոս) կայսեր (582–602) օրոք, և կապված էր պարսկա-բյուզանդական քսանամյա (572–591) պատերազմի հետ: Կողմերի միջև 591 թ. կնքվեց հաշտություն, որով Մարզպանական Հայաստանի մեծագույն մասը՝ «զաշխարհն Տանուտերական իշխանութեանն», անցավ կայսրությանը[58]: Հովհաննես Դրասխանակերտցին ևս հայտնում է այս բաժանման մասին, սակայն, ի տարբերություն Սեբեոսի, ներկայացնում նաև դրանից հետո առաջացած իրավիճակը: Նրա հաղորդմամբ՝ Մորիկ կայսրն **Առաջին Հայքը** վերանվանեց **Երկրորդ Հայք**, որի մայրաքաղաքը Սևաստիան էր: Կապադովկիան՝ Կեսարիա մայրաքաղաքով, որը նախապես **Երկրորդ Հայք** էր անվանվում, նա կոչեց **Երրորդ Հայք**՝ դարձնելով եպարքություն: Մելիտենեն՝ համանուն գավառով, որը **Երրորդ Հայքն** էր, կայսրը կոչեց **Առաջին Հայք**: Պոնտոսը նա կոչեց՝ **Մեծ Հայքի մաս**, իսկ **Չորրորդ Հայք** կոչվածը՝ Մարտիրուպոլիս-Նփրկերտ-Հուստիանունիստ մայրաքաղաքով, գրանցեց արքունի դիվանում: Կարնո աշխարհը՝ Թեոդոսուպոլիս մայրաքաղաքով անվանվեց **Մեծ Հայքի մեծ մաս**, Բասենի կողմերից մինչև Ասորեստանի սահմաններ՝ **Մեծ Հայք**, Տայքի կողմերն իր սահմաններով՝ **Խորագույն Հայք**, իսկ Դվին քաղաքի կողմը՝ **Ներքսագույն Հայք**[59]:

---

[56] Տե՛ս նույն տեղում, Nov. XXI, էջ 144–146:

[57] Տե՛ս նույն տեղում, էջ 145–146:

[58] Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Ե., 1979 (այսուհետև՝ **Սեբեոս**), էջ 76, 84:

[59] Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց (Մատենագիրք Հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 398–399): Այս մասին տե՛ս **Իսկանյան**

Ըստ Գևորգ Կիպրացու՝ կար Չորրորդ Հայք անունը կրող երկու եպարքիա: Ըստ Հ. Գելցերի՝ դրանք էին. առաջինը՝ Չորրորդ Հայքը, Մարտիրուպոլիս կենտրոնով[60], և երկրորդը՝ Չորրորդ Հուստինիանիան (Մյուս Չորրորդ Հայքը), Դադիմոն կենտրոնով[61]: Ա. Շահինյանը սակայն, փոխարենը գտնում է, որ հուստինիանոսյան Չորրորդ Հայքը, որն ընդգրկել է Մեծ Հայքի Ծոփք նահանգը, բաժանվել է «Հուստինիանոսյան Հայքի»՝ Մարտիրուպոլիս կենտրոնով և «Մյուս Չորրորդ Հայքի»՝ Արշամաշատ կենտրոնով[62]: Նա նաև հավելում է, որ կազմավորվեց ևս մեկ Չորրորդ Հայք պրովինցիա՝ Ամիդ կենտրոնով[63]: Ըստ նրա, ստացվում է երեք Չորրորդ Հայք անվամբ պրովինցիա, որը սակայն չի հաստատվում սկզբնաղբյուրներով: Մորիկ կայսրը Հուստինիանոս I-ի կազմավորած Չորրորդ Հայքից անջատեց Անգեղտուն և Մեծ Ծոփք (Նփրկերտ) գավառները, որոնք նախկին Աղձնյաց բդեշխության, Ծավդեքի իշխանության և Մեսոպոտամիա պրովինցիայի հետ կազմեցին «Միջագետք (Չորրորդ Հայք)» եպարքիան: Այնուհետև, կայսրը Չորրորդ Հայքի մնացյալ չորս գավառներին ավելացնելով Պաղնատուն, Խորձյան և Մուզուր գավառները՝ կազմավորեց «Չորրորդ Հուստինիանիա (Մյուս Չորրորդ Հայք)» եպարքիան[64]:

Ենթադրվում է, որ Մորիկ կայսրը Թեոդոսուպոլսից (Կարին) Շիրակաշատ (Շիրակավան, Երազգավորս) է տեղափոխել զինվորական մագիստրոսի

Վ., նշվ. աշխ., էջ 350–360, **Դանիելյան Է**., Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ Առաքելական եկեղեցին (VI–VII դարեր), Ե., 2000, էջ 40–49:

[60] Ն. Ադոնցը, ի տարբերություն Հ. Գելցերի, Չորրորդ Հայքի մայրաքաղաք է համարել ոչ թե Մարտիրուպոլիսը, այլ Ամիդը (**Ադոնց Ն**., նշվ. աշխ., էջ 264): Ադոնցին հետևելով Է. Դանիելյանը ևս նշել է, որ Միջագետք կամ Չորրորդ Հայք եպարքիայի կենտրոնը Ամիդն էր (**Դանիելյան Է**., նշվ. աշխ., էջ 43–44), սակայն իր իսկ կազմած քարտեզում հեղինակը, որպես կենտրոն նշել է ոչ թե Ամիդը, այլ Մարտիրուպոլիսը (քարտեզը տե՛ս նշվ. աշխ., 48–49 էջերի միջև):

[61] Տե՛ս **Georgii Cypri**, Descriptio orbis Romani, edidit praefatus est commentario instruxit Henricus Gelzer, Lipsiae, 1890, p. 46, 48: Տե՛ս **Գէլցէր Հ**., Սկզբնաւորութիւնք բիւզանդեան բանակաթեմերու դրութեան, Վիեննա, 1903, էջ 24, 27:

[62] **Шагинян А**. Административно-политическая карта Византийской Армении в VI веке (Петербургские славянские и балканские исследования, 2012, № 1, с. 179).

[63] Տե՛ս նույն տեղում, էջ 179–181:

[64] Հմմտ. Հայաստանի պատմության ատլաս, էջ 54: Արաբական արշավանքների հետ կապված Սեբեոսի հիշատակած Չորրորդ Հայքը (**Սեբեոս**, էջ 165, 171) տարածքով համապատասխանում էր «Մյուս Չորրորդ Հայքին» կամ «Աշխարհացոյց»-ի Ծոփք նահանգին՝ առանց Մուզուր գավառի (տե՛ս **Գէլցէր Հ**., նշվ. աշխ., էջ 24–25):

նստավայրը, որը անվանակոչվել է Մորիկապոլիս[65]: Թե՛ Հուստինիանոս I-ի և թե՛ Մորիկի նպատակն էր կայսրությանն անցած նոր տարածքներում ևս վերացնել նախարարական համակարգը, որի համար նախարարական ռազմուժը ոչնչացնելու նպատակով այն դուրս էր բերվում երկրից:

602–628 թթ. պարսկա-բյուզանդական պատերազմները ավարտվում են կայսրության հաղթանակով: Հաշտության պայմանագրով տարածաշրջանում վերահաստատվում էր 591 թ. սահմանագիծը[66]: Ս. Երեմյանը գտնում է, որ Փոկասից (602–610) հետո գահակալած Հերակլ կայսրը (610–641) վերացրել էր Մորիկի վարչական բաժանումները, և կատարել նորը[67]: Սակայն, 602–622 թթ. Խոսրով Բ Փարվեզը (590–628) ժամանակավորապես նվաճել էր ոչ միայն 591 թ. կայսրությանն անցած Հայկական մարզպանության, Բարձր Հայքի, Ծոփքի, Աղձնիքի արևմտյան երկու գավառների տարածքներն ու Փոքր Ասիայի մեծ մասը, ընդհուպ մինչև Կոստանդնուպոլսի մատույցները, այլև հարավում՝ Ասորիքը, Պաղեստինը, Եգիպտոսը[68]: Այսպիսի պայմաններում, Հերակլ կայսեր կողմից վարչական նոր փոփոխությունների իրականացումը պարզապես անհնար էր:

Կայսրության նոր վարչական պատկերի մասին հաղորդում է Կոստանդին Ծիրանածին կայսրը (913–920 և 945–959), ըստ որի՝ Բյուզանդիան տրոհվեց առանձին ռազմավարչական միավորների՝ բանակաթեմերի, միայն այն ժամանակ, երբ նրանց պետությունը թուլացավ և կրճատվեց հագարացիների (արաբների – **Հ.Խ.**) արշավանքների հետևանքով[69]:

Դժվար է ասել, որ բանակաթեմերի ստեղծումը տեղի է ունեցել հենց Հերակլ կայսեր կողմից[70]: Նրա օրոք Հայաստանի բյուզանդապատկան շրջաններում Հայոց իշխան էր կարգված Մժեժ Գնունին (628–635), ապա՝ Դավիթ

---

[65] Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց, Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2153: Տե՛ս նաև **Еремян С.Т**. Армения в VI–VII вв. (Очерки истории СССР. Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III–IX вв., М., 1958, с. 225):

[66] **Սեբեոս**, էջ 128:

[67] **Երեմյան Ս**., նշվ. աշխ., էջ 24:

[68] Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. II, Միջին դարեր, Երևան, 2016 («Սասանյան տերությունը» քարտեզը տե՛ս 240–241 էջերի ներդիրում):

[69] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին 6, Բյուզանդական աղբյուրներ Բ, **Կոստանդին Ծիրանածին**, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Ե., 1970, էջ 165–166:

[70] Հմմտ. նույն տեղում, էջ 318–319, ծան. 20:

Սահառունին (635–638/39), որից հետո իշխանությունը ստանձնել էր Թեոդորոս Ռշտունին (639–654): Բյուզանդիան և Պարսկաստանը միմյանց դեմ երկարատև պատերազմելով հյուծել էին իրար և չկարողացան դիմադրել վերահաս արաբական վտանգին, որից օգտվելով՝ Թեոդորոս Ռշտունին վերամիավորեց Հայաստանի երկու հատվածները:

АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВОЙ СТАТУС “ВИЗАНТИЙСКОЙ АРМЕНИИ” В 387–640 гг.

ХАЧАТРЯН Г.

Резюме

Ключевые слова: *Прокопий Кесарийский, Зенон, Византийская Армения, Внутренняя Армения, Юстиниан I, комит, нахарар-князь.*

В 387 г., после раздела царства Великой Армении, к Римской (Византийской) империи отошли западноармянские области Высокая Армения, Цопк и два округа Ахдзника–Ангехтун и Нпркерт. Армянские земли, отошедшие к империи, делились на три части 1. Малая Армения, которая вошла в состав империи ранее, была разделена на две провинции- Первая Армения со столицей в Себастии и Вторая Армения со столицей в Мелитене. 2. Великая или Внутренняя Армения. 3. Другая Армения или сатрапства. В 480-ые годы за содействие в восстании против императора Зенона (474–491) пять сатрапств из шести были лишены наследственного права в отношении должности сатрапа. В 528/529 г. император Юстиниан I (527–565) западноармянские земли включил в единую военную область, а в 536 г. разделил армянские земли на четыре провинции, которые назывались Армения, и тем самым нанес окончательный удар по гражданской и военной мощи князей-нахараров. Следующая крупная административная реформа была проведена императором Маврикием (582–602) после того, как в 591 г. большая часть Марзпанской Армении перешла к Византии. Армянские земли были разделены на десять епархий. После ирано-византийской войны в 602–628 гг. император Ираклий (610–641) в византийской части Армении, вероятно, со столицей

в Ширакашате, в качестве Армянского князя назначил вначале Мжежа Гнуни (628–635), затем Давида Сахаруни (635–638/39). После него Теодорос Рштуни (639–654) объединил под своей властью большую часть Марзпанской и Византийской Армении.

ADMINISTRATIVE AND LEGAL STATUS OF "BYZANTINE ARMENIA" IN 387-640s

KHACHATRYAN H.

Summary

Key words: *Procopius the Cesarean, Zeno, Byzantine Armenia, Inner Armenia, Justinian I, comes, prince-nakharar.*

In 387, after the partition of the Major Armenian kingdom, the Western Armenian regions particularly Upper Armenia, Tsopk and two districts of Aghdznik–Angeghtun and Nprkert passed to the Roman (Byzantine) Empire. The Armenian lands under the empire were divided into three parts, 1. Armenia Minor, that earlier became part of the empire was previously divided into two provinces – First Armenia capital in Sebastia and Second Armenia capital in Melitene; 2. Major or Inner Armenia; 3. Other Armenia or satrapies. In 480s five of six satrapies were deprived of their hereditary rights because of their rebellion against emperor Zeno (474–491). In 528/529 the emperor Justinian I (527–565) included the Western Armenian lands in a single military region. In 536 he divided the Armenian lands into four provinces, each of which was called Armenia. This was a final blow in regard to the civil and military might of the princes-nakharars. The next major administrative "reform" was carried out by the emperor Maurice (582–602). Most of the Armenian marzpanate lands passed to Byzantium in 591, Maurice divided it into ten eparchies. After the Iranian-Byzantine war of 602–628ss the emperor Heraclius (610–641) in the Byzantine part of Armenia (probably the capital in Shirakashat) appointed Armenian princes, first Mzhezh Gnuni (628–635), then David Saharuni (635–638/39). Theodoros Rshtuni (639–654) afterward, united most of the marzpanate and the lands of Byzantine Armenia under his authority.